

Հ Ր Ա Մ Ա Ն 739

ՀԱՆՁՆՈՒՔՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԴԻԱՆՑԻՑ ՊԱՅԻԵՆՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՅԻԵՆՏՆԵՐԻ ՍՆՈՒՆԴԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<03>> դեկտեմբերի 2019թ.

Ք.ԵՐԵՎԱՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ կետով, ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի Կանոնադրության 8.11-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ նկերության աշխատակիցների կողմից պացիենտներին բերվող հանձնուքների ստուգման, ընդունման, պացիենտների կողմից հանձնուքներից օգտվելու և առանձին պացիենտների սնունդը կազմակերպելու հետևյալ կարգը՝
2. Հանձնուքների ընդունումը և ստուգումը վերապահել բացառապես ավագ բուժքրոջը՝ ցերեկային ժամերին (ժամը՝ 9⁰⁰- 16¹² ընկած ժամանակահատվածում), իսկ ժամը՝ 16¹²-9⁰⁰ ընկած ժամանակահատվածում վերապահել հերթափոխի հերթապահ բուժքրոջը:
3. Արգելել հանձնուքի օգտագործումը Ընկերության աշխատակազմի կողմից՝ հանձնուքի չթույլատրվող բաժինը անմիջապես վերադարձնելով հանձնուք բերողին՝ հիվանդանոցից դուրս բերելու նպատակով:
4. Բացառիկ դեպքերում, երբ պացիենտը ամբողջությամբ հրաժարվում է հիվանդանոցային սննդից, կազմակերպել պացիենտի սնունդը ընտանիքի անդամների կողմից՝ շաբաթվա բոլոր օրերին, օրը երեք անգամ, միայն բաժանմունքի վարիչի գրավոր առաջարկով և տնօրենի առանձին հրամանով, դիետ քրոջ կողմից հաստատված ճաշացանկերին համապատասխան:
5. Հաստատել ՀՀ ԱՆ «ՀԱՊԱԿ» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում ստացող պացիենտների համար նախատեսված հանձնուքի մեջ ներառվող արգելված, մասնակի սահմանափակումներով թույլատրված և առանց սահմանափակումների թույլատրված, սննդամթերքի ցանկերը համաձայն Հավելված 1-ի, որը հանդիսանում է սույն հրամանի անբաժանելի մասը:

6. Հաստատել ՀՀ ԱՆ «ՀԱՊԱԿ» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում ստացող պացիենտների համար նախատեսված հանձնուքի մեջ ներառվող արգելված, մասնակի սահմանափակումներով թույլատրված և առանց սահմանափակումների թույլատրված, անձնական օգտագործման համար նախատեսված տնտեսական իրերի, ապրանքների և հիգիենիկ պարագաների ցանկերը համաձայն Հավելված 2-ի, որը հանդիսանում է սույն հրամանի անբաժանելի մասը:
- 7.Բաժանմունքի վարիչներին ապահովել հրամանի և կից հավելվածների կատարումը: Հրամանի և կից հավելվածների կատարման վերահսկողությունը հանձնարարել Վաղինակ Հովհաննիսյանին:
8. Կատարել բացատրական աշխատանքներ պացիենտների և նրանց հարազատների կամ ընտանիքի անդամների հետ:
9. Հրամանով սահմանված կարգը և կից հավելվածները ներառել ներքին կարգապահական կանոնների մեջ:
- 10.Ընկերության գլխավոր բուժքույր՝ Թ.Հարությունյանին հանձնարարել հրամանում նշված բոլոր աշխատակիցներին ծանոթացնել սույն հրամանով և կից հավելվածներով հաստատված կարգին:
- 11.Ընկերության տնտեսվար՝ Ա.Պետրոսյանին հանձնարարել հնգօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի և կից հավելվածների տեղադրումը բոլոր այն անձանց համար տեսանելի և հասանելի վայրում, որոնց ուղղված է սույն հրամանը:
- 12.Սույն հրամանը և կից հավելվածներն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից՝ 04.12.2019թվականից:

ՏՆՕՐԵՆ՝

ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԱՆ «ՀԱՊԱԿ» ՓԲԸ ստացիոնար բուժում ստացող պացիենտների համար նախատեսված հանձնուքի մեջ ներառվող՝ արգելված, մասնակի սահմանափակումներով թույլատրված և առանց սահմանափակումների թույլատրված, սննդամթերքի ցանկեր

Արգելվում է

1. Միս և մսամթերք, անկախ տեսակից և պատրաստման եղանակից, թարմկամ սառեցված լինելուց;
2. Բոլոր տեսակի մսի տեսակներից և պատրաստման թարմության խորովածներ և քաբաբներ, կոտլետներ և այլ տեսակի միս պարունակող ուտելիք;
3. Նրբերշիկներ և երշիկեղեն, բոլոր տեսակների և ցանկացած արտադրության, հում կամ եփած կամ ապխտած կամ ցանկացած այլ եղանակով պատրաստված;
4. Նրբերշիկ կամ երշիկեղեն պարունակող թխվածքներ, բուտերբրոդներ կամ այլ տեսակի ուտելիքներ;
5. Ձուկ և ձկնամթերք, անկախ տեսակից և պատրաստման եղանակից, թարմ կամ սառեցված լինելուց;
6. Կաթ և կաթնամթերք, անկախ գործարանային արտադրության կամ տնային պայմաններում պատրաստված լինելուց;
7. Կաթ և կաթնամթերք պարունակող ճաշեր;
8. Տնային պայմաններում պատրաստված և տնական ամանեղենով փաթեթավորված ճաշեր, ուտեստներ, ուտելիքներ;
9. Տնային պայմաններում պարաստված բանջարեղենային և այլ տեսակի թթուներ;
10. Տնային կամ այլ պայմաններում պատրաստված և փաթեթավորված սալաթներ;
11. Տնային պայմաններում պայմաններում պատրաստված բանջարեղեն պարունակող պահածոներ;
12. Սպիրտ կամ սպիրտ պարունակող խմիչքներ, ցանկացած տեսակի, այդ թվում՝ գարեջուր, գինիներ, օղիներ, կոնյակներ, սպիրտային օշարակներ, լիկյորներ, սպիրտով պատրաստված թուրմեր և այլն;
13. Կրեմով պատրաստված տորթեր, թխվածքներ;
14. Առանց պիտանելիության ժամկետի մակնշման սննդային պահածոներ;
15. Համուկներ, ցանկացած տեսքով, այդ թվում փոշի;
16. Աղ;
17. Սուրճ հատիկներով;
18. Ծամոններ;
19. Ժամկետանց սննդամթերք, այդ թվում պահածոյացված:

Մասնակի սահմանափակումներ

1. Տորթեր՝ բերված օրվա մեջ սպառումը կամ օգտագործումը գերազանցող քանակները;
2. Նախապես կտրատված միրգ, բանջարեղեն:

Թույլատրվում է առանց սահմանափակման.

1. Լավաշ կամ այլ հացամթերք;
2. Թխվածքներ, պատրաստված բացառապես առանց կրեմերի;
3. Թխվածքաբլիթներ, պատրաստված բացառապես առանց կրեմերի;

4. Վաճառքներ;
5. Շուկայական;
6. Կոնֆեկտներ;
7. Միջոց, բացառապես ամբողջական և լվացված;
8. Բանջարեղեն՝ բացառապես ամբողջական և լվացված;
9. Մրգային կամ այլ տեսակի համակցված հյութեր, ըմպելիքներ՝ բացառապես գործարանային արտադրության, բացառապես պիտանելիության ժամկետի մականշմամբ;
10. Մուրաբաներ, ջեմեր, հերմետիկ փակվող տարաներով;
11. Մեղր, հերմետիկ փակվող տարաներով;
12. Ընդեղեն (ընկուզեղեն)՝ պոպոկ, պնդուկ և այլն;
13. Աղացած սուրճ՝ չբացված, փակ, հերմետիկ փաթեթավորմամբ;
14. Սուրճ եփած և փաթեթավորված, բացառապես գործարանային արտադրության, օգտագործման ժամկետի մականշումով;
15. Թեյ, եփած և փաթեթավորված, օգտագործման ժամկետի մականշումով՝ գործարանային պատրաստման կամ հում չեփված՝ ցանկացած փաթեթավորմամբ;
16. Շաքարավազ՝ բացառապես հերմետիկ փակվող տարաների (ապակյա կամ պլաստիկ) մեջ;
17. Դիաբետիկ սնունդ՝ համաձայնեցնելով բաժանմունքի վարիչի և հիվանդանոցի ադմինիստրացիայի հետ;
18. Հատուկ սննդամթերք կամ սննունդ պացիենտի առողջական խնդիրների առկայության դեպքում, բուժող բժշկի նշանակման առկայության դեպքերում՝ համաձայնեցնելով բաժանմունքի վարիչի և հիվանդանոցի ադմինիստրացիայի հետ:

Հավելված 2

ՀՀ ԱՆ «ՀԱՊԱԿ» ՓԲԸ ստացիոնար բուժում ստացող պացիենտների համար նախատեսված հանձնուքի մեջ ներառվող՝ արգելված, մասնակի սահմանափակումներով թույլատրված և

առանց սահմանափակումների թույլատրված, անձնական օգտագործման համար նախատեսված տնտեսական իրերի, ապրանքների և հիգիենիկ պարագաների ցանկեր

Արգելված տնտեսական իրեր և ապրանքներ

1. Ցանկացած տեսակի դանակ, մկրատ, պատառաքաղ, կարի ասեղներ;
2. Ծակող, կտրող, փորող կամ սղոցող իրեր կամ գործիքներ;
3. Ներարկաման սրսկիչներ՝ բոլոր տեսակների և չափերի, ասեղով կամ առանց, փաթեթավորված կամ առանց;
4. Շինարարական գործիքներ;
5. Լամպեր, լուսավորման սարքեր;
6. Համակարգիչներ, տաբլետներ ցանկացած տիպի և չափերի;
7. Ածելիներ՝ մետաղյա և բաց երիզով;
8. Լարեր, պարաններ, ճգուտներ, կապելու համար պիտանի իրեր;
9. Ականջակալներ;
10. Մննուող ստանալու պլաստիկ կամ երկաթյա սպասք;
11. Մմարթ հեռախոսներ, ռադիոկապի միջոցներ;
12. Օծանելիք՝ ցանկացած տեսակի;
13. Նկարահանող /վիդեո և ֆոտո/ և ձայնագրող սարքեր, սարքավորումներ;
14. Հեշտությամբ բռնկվող և այրվող կամ ինքնաբոցավառվող նյութեր կամ նման նյութեր պարունակող իրեր և առարկաներ;
15. Մոխրամաններ:

Որոշակի սահմանափակումներով թույլատրված

1. Միանվագ օգտագործման՝ պլաստմասե ածելիներ ոչ ավել քան 30 միավոր մեկ ամսվա ընթացքում, բաժանմունքի տնտեսուհու կամ ավագ բուժքրոջ տնօրինության ներքո;
2. Ապակյա կամ կերամիկական, հարթ մակերեսով սննունդ ստանալու սպասք և մեկ հատ ապակյա բաժակ, անհատական օգտագործման՝ բացառապես բաժանմունքի սննդի մատակարարի տնօրինմամբ, պացիենտի բուժման ամբողջ ընթացքում;
3. Հեռուստացույց, բացառապես պատին ամրացվող, բացառապես թվային, բաժանմունքի վարիչի և ադմինիստրացիայի համաձայնությամբ:

Առանց սահմանափակումների.

1. Ատամի մածուկ;
2. Ատամի խոզանակ;
3. Օձառներ, պինդ կամ հեղուկ;
4. Զուգարանի թուղթ;
5. Անձեռնոցիկներ, խոնավ կամ չոր;
6. Ձեռքերի ախտահանման գել-լուծույթներ, ոչ ալկոհոլային հիմքով;
7. Լոզանք ընդունելու պարագաներ, հեղուկներ, բացառապես գործարանային արտադրության, փակ վիճակում և նոր;

8. Բջջային հեռախոս, բացառապես ոչ սմարթ, առանց ֆոտո և վիդեոնկարահանման հնարավորությունների, օգտագործումը պացիենտի կողմից բացառապես հիվանդանոցի ներքին կարգապահական կանոններին համապատասխան;
9. Սրբիչներ;
10. Անձնական հագուստ, այդ թվում ամառային և ձմեռային;
11. Կոշիկներ և հողաթափեր;
12. Ակնոցներ՝ բացառապես օպտիկական, բացառապես պլաստիկ կամ պլաստմասսաներից պատրաստված, հիվանդանոցում գտնվելու ամբողջ ընթացքում ավագ քրոջ և տնտեսուհու տնօրինմամբ;
13. Տակդիրներ;
14. Ներքնակներ;
15. Անկողնային պարագաներ;
16. Բարձ;
17. Գրքեր, ամսագրեր, բացառապես ոչ սեքսուլ բնույթի և նմանատիպ նյութեր պարունակող;
18. Թուղթ, տետրեր, բլոկնոտներ, այդ թվում նկարչական, գունավոր;
19. Գրիչներ՝ բացառապես գնդիկավոր;
20. Ներկեր՝ բացառապես աշխատանքային թերապիայի մասնագետի տնօրինմամբ;
21. Թերթեր, ամսագրեր, օրացույցներ և այլ տեսակի տպագրական նյութեր;
22. Ծխախոտ՝ չխախտված փաթեթավորմամբ (տուփով կամ բլոկով);
23. Անձնական պայուսակ, փականով կամ առանց;